

ԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄ ՀԵՌԱԿԱ ԿՈՒՐՍԵՐ

4149

ՔԻՄԻԱՅԻ
ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2-3

Կազմեց ԱՐԵԱՄ ԱԹԱՆԱՍՅԱՆ

54(07)

4-26

ԴԱՏԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍ»
•ՊՈՏՈՎ-ԴՊ

1932

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄԻ ՀԵՌԱԿԱ ԿՈՒՐՍԵՐ

Ժամանակ
6

ՔԻՄԻԱՅԻ
ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2-3

Կազմեց՝ Ա. ԲԵՐԵԳ 1932 թ.

2010

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՆ»
ՈՂՈՏԵՐ-ԴՈՆ

1932



1938



ԿՀ 608 ՐՀ



3706-53

КНИГОИЗДАТЕЛЬСВО
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ“



ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2.

Այս առաջադրությամբ մենք ուսումնասիրելու յենք մեխանիկական խառնուրդի և քիմիական միացության հասկացողությունը: Այսուհետև կծանոթանանք նյութի պահպանման որենքին:

Միաժամանակ ծանոթանալու յենք բնության մեջ յեղած ջրերին, ջրի նշանակությանը, նրա տեսակներին և տարրերության պատճառներին: Ապա պետք է ծանոթանանք ջուրը քամելու և թորելու յեղանակներին և թորած ջրի հատկություններին: Վերջում կուսումնասիրենք համաձուլվածքները, վորոնք մեծ գործածություն ունեն տեխնիկայում և առորյա կյանքում:

Առաջադրության մշակումը մենք դարձյալ պետք են սկսենք գործնական աշխատանքներով, վորոնք կպարզաբանեն մեզ՝ առաջադրության նյութ դարձրած խնդիրները:

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՑԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԱՋՈՒԹՅՈՒՆ

Աժխատանի 1- Կշռեք ձիշտ 7 գրամ յերկաթափոշի և 4 գրամ ծծմբափոշի, ածեք հավանդի մեջ և լավ խառնեք իրար: Այդ խառնուրդը բաժանեք 4 մասի:

ՆՅՈՒԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՐԵՆՔԸ

Աժխատանք 2. Վերցրեք ձեր խառնուրդի առաջին մասը, ածեք սպիտակ թղթի վրա և սրան մոտեցրեք մագնիսի բեկուները, ինչն ե կպչում մագնիսին: Մագնիսը թեթև կերպով թափ տվեք մի ուրիշ թղթի վրա: Ի՞նչ ե թափում թղթի վրա և ինչն ե մուռ մագնիսի վրա: Այդ յեղանակով բաժանեք յերկաթի մասնիկները ծծմբի մասնիկներից:

Աժխատանք 3. Վերցրեք խառնուրդի 2-րդ մասը, ածեք ջրով լցրած մի փոքրիկ թասի կամ բաժակի մեջ, ապակի ձողով լավ խառնեք և թողեք հեղուկը հանգստանա: Քիչ հետո տեսեք — ի՞նչ ե նստում ջրի հատակին և ինչն ե լողում ջրի յերեսին:

Աժխատանք 4. Վերցրեք խառնուրդի 3-րդ մասը, ածեք մի փորձանոթի մեջ և ներքնի մասից տաքացրեք սպիրուսով վրա: Յերբ ռեակցիան ներքնից սկսվի, դադարեցրեք տաքացնել և թողեք ռեակցիան վերջանա: Ռեակցիան վերջանալուց և փորձանոթը սառելուց հետո, կոտրեք փորձանոթը ու տեսեք, թե ինչ փոփոխության ե յենթարկվել ձեր խառնուրդը:

Աժխատանք 5. 4-րդ աշխատանքի ժամանակ ստացված զանգվածն ածեք հավանգի մեջ և լավ տրորելով, փոշի դարձրեք: Այնուհետև փորձեցեք այդ փոշուց անջատել յերկաթը և ծծումը, ինչպես այդ անում նյինք և 2-րդ և 3-րդ աշխատանքների ժամանակի:

Աժխատանք 6. Վերցրեք 4-րդ աշխատանքի ժամանակ ստացված զանգվածի փոշուց մի քիչ, ածեք մի փորձանոթի մեջ և վրան ալելացրեք մի քիչ նոսր աղաթթու: Ի՞նչ հոտ եք զգում (հոտոտեցեք փորձանոթի բերանից):

Աժխատանք 7. Կրկնեցեք 6-րդ աշխատանքը, բայց այս անգամ վերցրեք ձեր պատրաստած ծծմբի և յերկաթ փոշու խառնուրդի 4-րդ մասը.

Ի՞նչ յեղակացություն կարող եք անել ձեր կատարած աշխատանքներից:

Աժխատանք 8. Վերցրեք կես լիտրանոց (500 լս. ս.) հասապատերով մի սրվակ և մեջն այնքան ավաղ ածեք, վորս սրվակի հատակը ծածկվի ավաղով: Այնուհետև դցեք սրվակի մեջ մի փոքր կտոր դեղին փոսֆոր (Փոսֆորը թունավոր է, դրա համար նրա հետ պետք ե զգուշ վարվել. Ջրի միջից փոսֆորը պետք ե հանել պինցետով և կտրել դարձյալ ջրի մեջ. ձեռքով բռնել չի կարելի), սրվակի բերանը պինդ կերպով փակեք ուստինե խցանով և վերջինս ամրացրեք յերկաթե լարով (կամ թելով) լիմոնաթի շնի խցանի պես, վորովհետև փոսֆորն այրվելիս, հաճախ խցանը դուրս ե թռչում: Այդ բոլորը կատարելուց հետո սրվակը հավասարակշռեք կշեռքի վրա: Դրանից հետո սրվակը զգուշությամբ տաքացրեք սպիրուսով վրա, մինչև փոսֆորը վառվի: Վերջինիս այրվելը վերջանալուց հետո, թողեք սրվակը բռորովովին սառի և նորից դրեք կշեռքի վրա: Կշռի տարբերություն նկատվում ե, թե վոչ: Այժմ հանեք սրվակի խցանը ու նորից ծածկելով կշեռքի: Ի՞նչ տարբերություն եք նկատում: Ի՞նչով եք բացատրում սրվակի ծանրանալը:

Այս փորձի ժամանակ յերբեմն սրվակը կտրվում ե և ապակու կտորները ցրվում են այս ու այն կողմը: Դրա համար լավ կլինի, վոր սրվակը ծածկեք ապակի զանգով կամ փաթաթեք շորով:

ՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՑԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ
ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆ

Գետք ե տարբերել մեխանիկական խառնուրդը քիմիական միացությունից: Մեխանիկական խառնուրդի ժամա-

նակ իրար խառնված նյութերը մնում են ինքնուրույն և հեղությամբ բաժանվում են միմիանցից (հիշեք ոդում թթվածինը և ազոտը):

Որինակ, յերբ իրար հետ խառնում ենք յերկաթի և ծծմբի փոշիները, մագնիսը խառնուրդին մոտեցնելիս տեսնում ենք, վոր նրա վրա նստում են յերկաթի մասնիկները՝ բաժանվելով խառնուրդից: Յերկաթի և ծծմբի խառնուրդից այդ նյութերը հեղտությամբ բաժանվում են իրարից նաև ջրի միջոցով: Իսկ յերբ ծծմբափոշու և յերկաթափոշու խառնուրդը, վոր մեխանիկական խառնուրդ և կոչվում, փորձանոթի մեջն ածած տաքացնում ենք, աեղի յի ունենում քիմիական միացում, այսինքն նյութերը քիմիապես իրար միանալով կազմում են մի նոր նյութ, վոր կոչվում և ծծմբայերկաթ կամ յերկաթուլֆիդ (ծծումբ + յերկաթ = ծծմբայերկաթ): Ստացված նոր նյութից, վերը նշած յնդանակներով այլև չենք կարող անջատել վոչ յերկաթը և վոչ ել ծծումբը (ինչպես այդ տեսաք 5-րդ աշխատանքի ժամանակ), վորովհետև ստացված նոր նյութի մեջ ազատ վիճակում այլև չկա վոչ յերկաթ և վոչ ել ծծումբ, այլ կա այդ նյութերի միացությունը, վոր ուրիշ անուն և կրում և ունի տարբեր հատկություններ (հիշեք 6-րդ և 7-րդ աշխատանքները):

Առաջին աշխատանքի ժամանակ, յերկաթի և ծծումբի խառնուրդ պատրաստելու համար, մենք վերցրինք համապատասխան քանակություններ՝ 7 գրամ յերկաթափոշի և 4 գրամ ծծմբափոշի: Համապատասխան քանակություններ վերցնելու դեպքում, ուսակցիսն տեղի ունենալուց հետո չի մնում վոչ ծծմբի և վոչ ել յերկաթի աղատ մասնիկներ: Իսկ յեթե յերկաթը լինի հիշած քանակությունից քիչ ավելի, ապա այդ ավելին չի մտնի ծծմբայերկաթի կազմության մեջ և մագնիսի միջոցով կարելի կլինի այդ ավելցուկը հեռացնել: Նույն բանը տեղի կունենա, յեթե ծծումբը 4 գրամից ավելի վերցնենք: Ավելորդ ծծումբը դարձյալ չի

մտնի ծծմբայերկաթի կազմության մեջ, այլ կայրվի առանձին և առաջ բերելով ծծմբային դագ՝ կտարածվի ողում:

Այս յերեւութը դիտելու համար, հետևյալ աշխատանքները կատարեցնեք:

ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՐԵՆՔԸ

Մի շաբաթ գիտնականներ բացմաթիվ փորձերի հիման վրա հաստաել են վերին աստիճանի պարզ, բայց խիստ ուշագրավ մի փաստ, այդ այն և, վոր Ֆիզիկական յեվ ֆիմիական փոփոխությունների ժամանակ, փոփոխություններին մասնակցող նյութերի ընդհանուր կույային հանակությունը վարելի փոփոխության չի լենքարկվամ:

Այսպես որինակ, յեթե ա գրամ մետաղին միանում և Յ գրամ թթվածին, ապա ստացվում ե անպայման Ա+Յ գրամ ոքսիդ կամ յեթե Ը գրամ կապարի հետ հալվում ե Ը գրամ անագ, ստացվում ե անպայման Ը+Յ գրամ խառնուրդ (զող), և այլն:

Կըսի պահպանման այս որենքը պարզ ու վորոշ ձեռվով ձեռվակերպել են՝ առաջին անգամ ոռու փիզիկոս և քիմիկոս Լոմնիսոսվը (1711—1755), և ապա Գրանսիսիացի հայտնի գիտնական Լավուազեն (1749—1794). Դրա համար ել այդ որենքը կոչվում է նյութի պահպանման կամ Լոմնիսոսվ—Լավուազեի որենք:

Ավելի հասկանալի բառերով այդ որենքը կարելի յի արտահայտել և այսպես—բնուրյան մեջ նյութը վոչ ստեղծվամ յեվ վոչ ել կարչում ե:

Մեղ թվում ե, վոր նյութերն այրվելիս կորչում, անհետանում են: Որինակ, յերբ մոմը վառվում, վերջանում ե, կարծեք թե նրա նյութը բոլորովին վոչնչացավ, բայց այդ բոլորը մեզ թվում ե միայն: Սակայն, յերբ մենք փորձ ենք կատարում նյութի պահպանման որենքը ծառելու և մեզ համար պարզելու նպատակով, այնպիսի պայմաններ ենք ստեղծում վոր փոփոխման յենթարկվող նյութերը բոլորովին մեկու-

սացած լինեն, վորպեսզի վոչ դրսից վորմե նյութ մտնելով ավելանա յեղածի վրա և վոչ ել ներսից նյութ դուրս գա՝ դեպի շրջապատը: Դուք արդեն այդպիսի մի աշխատանք ինքներդ կատարեցիք—ֆոսֆորը փակ անոթում այրելով (աշխ. 8) և տեսաք, վոր ամբողջ սարքավորումը ֆոսֆորի այրելուց առաջ և այրելուց հետո՝ նույն կշիռն ուներ: Իսկ յերբ անոթի բերանը բացում ենք, ողը կը սից անոթի մեջ մտնելով անոթը ծանրանում ե: Իսկ ինչո՞ւ դրսից ոդն անոթի մեջ պետք է մտնի, այդ արդեն ձեզ համար հասկանալի պետք ել լինի, վորովհետև ֆոսֆորն այրվելիս միանում ե ամանի մեջ յեղած ոդի մի մասի—թթվածնի հետ և ամանի մեջ ազատ տեղ ե բացվում դրսից յեկող նոր ոդի համար:


Նյութի կորուստ չենք նկատի և այն ժամանակ, յեթե մենք մոմի այրելիս հավաքենք այրումից առաջացած բոլոր պրոդուկտները: Յեթե մոմի այրումից առաջացած նյութերը կշռենք, կտեսնենք, վոր նրանց կշիռն ավելի յի, քան մոմինը և դա հասկանալի յե, վորովհետև մոմի այրման ժամանակ նրա նյութերին միանում ե ոդի թթվածինը:

Այս յերկույթը դիտելու համար, այսպիսի մի աշխատանք կատարեցեք:

Աժխատանք 11. Ստվարաթղթի վրա ամրացրեք մոմը և դրեցեք կշեռքի նժարներից մեկի վրա: Այդ նժարի վրա դրեցեք վերսի մասում գլան ունեցող յեռոտանին, այնպես, վոր մոմը վառելուց նրա բոցը դանվի գլանի ներքեի մասում: Յեռոտանու գլանի մեջ ածեցեք նատրոնակիր (փոքրիկ կը տարներով). այդ նյութը լինելու դեպքում գլանի ներքեի մասն ածեցեք հանգած կրի փոքրեկ կտորներ, իսկ վերսի մասում կծու նատրիումի փոքրիկ կտորներ* (կծու նատրիումը ձեռքով չվերցնել այլ ունեիքով): Հետո կշեռքի մի-

* Նատրոնակիրը, ինչպես և կիրն ու կծու նատրիումը իրենց մեջ են կլանում մոմի այրումից առաջացած պրոդուկտները և թույլ չեն առլիս ողում ցրվելու:

յուս նժարի վրա քարեր դնելով՝ հավասար կշռեցեք (տես նկ. 1): Այս բոլորը պատրաստելուց հետո, վառեցեք մոմը ու դիտեք, թե ինչպես կշեռքի այն նժարը, վորի վրա արև ված ե մոմը՝ կամաց-կամաց ցած և իջնում (ծանրանում ե) չնայած նրան, վոր մոմը այդ ժամանակամիջոցում



Նկ. № 1

աստիճանաբար քչանում և վորոշ ժամանակ (10-15 րոպե) անցնելուց հետո հանցը մոմը և վորոշեցեք կշռի ավելցուկը:

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Բերեք սեխանիկական խառնուրդի մի քանի որինակներ:

2. Բերեք քիմիական միացությունների մի քանի որինակներ:

3. Ծծմբի և յերկաթի փոշիների խառնուրդից ծծումը և յերկաթը ինչ յեղանակով կարելի յե բաժանել իրարից:

Ի՞նչ տարբերություն կա սեխանիկական խառնուրդի և քիմիական միացության միջև:

5. Ինչում և կայանում նյութի ելեմենտների կշռային հարաբերությունների կայունության որենքը:


6. Ինչում և կայանում նյութի պահպանման որենքը:

7. Բերեք որինակներ ձեզ ծանոթ յերևոյթներից, վուրոնք կապացուցեն նյութի պահպանման որենքը;

8. Ովքե՞ր են հաստատել նյութի պահպանման որենքը:

ԶՐԻ ԹԱՄԵԼԸ

Աշխատանք 12. Վերցրեք կես բաժակի չափ մաքուր սուվորական ջուր և նրա մեջն ածեք մի թեյի գդալ կերակրի աղ ու զգալով խառնեք: Ի՞նչ և լինում աղը ջրի մեջ: Մի քանի լուսկ անցնելուց հետո տեսեք, ջրի գույնը փոփոխու-



Նկ. 2 ա. Քամոց պատրաստելու յեղանակը

Թյան յենթարկվում ե, թե վոչ: Հետո այդ աղի ջրի մեջ մի քիչ հող կամ մոխիր ածեք և խառնեք զգալով (կամ պալակի ձողով): Ի՞նչ է լինում ջուրը: Վերցրեք քամիչ

թուղթ, պատրաստեք քամոց: Քամոց պատրաստելու համար վերցրեք ծծան թուղթ, կտրեցեք նրանից մի քառակուսի, ծալեք յերկարությամբ և ապա լայնությամբ և ստացված քառածալ թղթի յեղբերը կտրեք մկրատով այնպես, վոր ստացվի շրջանի մի քառորդ: Այնուհետեւ բաց արեք այդ քառածալ թուղթն այնպես, վոր մի կողմում լինի յերեք ծալք, մյուս կողմում՝ մի

քամոցով ջուր են քամում ծալք և քամոցն արդեն պատրաստ ե (Նկ. 2), և պըղ-


տոր ջուրը ածեք ձագարի մեջ: Քամած ջուրը հավաքեք մի առանձին ամանի մեջ, տեսեք նրա գույնը ու փորձեք համը:

Ածխատանք 13. Քամած ջրից մի քիչ ածեք հախճապակյա թասի մեջ և տաքացրեք սպիրտայրոցի վրա մինչև ջրի գուրշիանալը: Ի՞նչ և մնում թասի տակը:

ԶՐԻ ԹՈՐԵԼԸ

Աշխատանք 14. Վերցրեք մի թեյի բաժակ մաքուր ջուր և նրա մեջը լուծեք կերակրի աղ այնքան, վոր ջուրն աղի համ ունենա: Այդ աղի ջուրն ածեք սրվակի մեջ և համար յեռոտանու վրա դրված մետաղյա ցանցի վրա: Փակեք սրվակի բերանը խցանով և վերջինիս միջով սրվակի մեջ մտցրեք յերկծունկ ապակյա յերկար խողովակի մի թւը: Այնուհետեւ յերկծունկ խողովակի մյուս ծայրը մտցրեք մի այլ սրվակի մեջ, վոր դրված ե սառը ջրով լցրած տաշտի մեջ (Նկ. 3.):

Այս բոլորը պատրաստելուց հետո, տաքացրեք աղի ջուր պարունակող սրվակը: Յերբ ջուրը տաքանա, յետ գա, նրա գոլորշիանելը խողովակով անցնելով՝ կմտնեն յերկորդ սրվակը վոր դրված և տաշտի մեջ:



Նկ. 3 Ջրի թորումը

Գոլորշիանելը մտնելով այդ սրվակի մեջ և կպչելով նրա սառ պս տերին՝ կիստանան և հեղուկ կդառնան (այդ ժամանակ պ' տք ե շուտ-շուտ փոխեք տաշտի ջուրը, վոր պեսզի սրվակի պատերը միշտ սառը մնան): Վորոշ ժամանակ անցնելուց հետո, յերբ յերկորդ սրվակի մեջ բավա-

կան ջուր հավաքվի, դադարեցրեք աշխատանքը։ Այդ ջուրը կոչվում ե թորած ջուր։ Փորձեք թորած ջրի համը։

Աժխատանք 15. Վերցրեք մի քիչ այդ թորած ջրից, ածեցրեք հախճապակյա թասի մեջ և կրակի վրա տաքացնելով, ամբողջ ջուրը գոլորշիցը թափանք։ Ի՞նչ է մնում թափանք։

Աժխատանք 16. Վերցրեք մի բաժակ թորած ջուր, ածեք սրվակի մեջ և բերանը խցանեք։ Վերջինիս միջով սըրավակի մեջը մտցրեք ցելսիուսի ջերմաչափը, վորը հարյուրից ավելի աստիճաններ ունի, այնպես վոր ջերմաչափը ջրին չկպչի։ Խցանի միջով անցկացրեք մի ապակյա կարճ և ուղիղ խողովակ ևս, վորտեղից պետք ե դուրս գան ջրի գուրշինները։ Այդ բոլորը պատրաստելուց հետո, սրվակը տաքացրեք սպիրտայրոցով, դնելով այն յեռոտանու ցանցի վրա։ Յերբ ջուրը յեռ գա, տեսեք՝ քանի աստիճան ե ցույց տալիս ջերմաչափը։ Ջուրը յեռալու ընթացքում տեսեք նաև՝ սնդիլը նույն աստիճանի վրա յե կանդ առնում, թե՛ բարձրանում ե։ Այդ գիտողությունը ձեղ կապացուցի, վոր իրոք ջուրը յեռալու ժամանակ ջերմաչափը միշտ նույն աստիճանն ե ցույց տալիս՝ նույնիսկ յեթե յեռան պրոցեսը որեր, ամիսներ ու տարիներ տեղեն։

Աժխատանք 17. Նման փորձ կատարեք սրվորական ջրի, աղի ջրի հետ և նրանց յեռման կետերը համեստեք սիմիանց հետ։

**ՀԱԳԵՑԱԾ ՅԵԿ ԶԱԳԵՑԱԾ ԼՈՒԾՈՒՅԹ ՅԵԿ ԲՅՈՒԵՐԵ-
ՂԱՑՈՒՄ**

Աժխատանք 18. Վերցրեք մի բաժակ մաքուր ջուր (բաժակի մոտ $\frac{2}{3}$ մասը), մեջը թեյի գլազով կերակրի աղ ածեք ու խառնեցեք։ Այդպես քիչ-քիչ աղ ածեք բաժակի մեջ ու խառնեցեք մինչև վոր ածած աղը նստի բաժակի հատակին։ Ի՞նչու աղն այլևս չի լուծվում։

Աժխատանք 19. Հագեցած այդ լուծույթը դրեք յեռոտանու ցանցի վրա և տաքացրեք սպիրտայրոցի վրա՝ գըղալով կամ ապակի ձողով միշտ խառնելով։ Ի՞նչ է լինում

բաժակի հատակին նստած աղը։ Բաժակի մեջ նորից աղ ածեք ու տեսեք՝ լուծվում ե թե վոչ։ Շարունակեք աղ ածել ու խառնել մինչև լուծույթը հագենա։ Տաք վիճակում հագեցած այդ լուծույթը դրեք մի հանգիստ տեղ և թողեք սարի, թելի ծայրին մի փոքր կոշտ աղի բյուրեղ կապելով՝ իջեցրեք լուծույթի մեջ։



Աժխատանք 20. Նման փորձ նկ. 4 Բյուրեղ կախված լուծույթի մեջ։ կատարեցեք պղինձարջասպի (կապույտ շիբ) հետ։ կատանաք ավելի լավ բյուրեղներ։ (Նկ. 4)։ Մի որից հետո տեսեք—ի՞նչ ե յեղել աղի բյուրեղը։ Ի՞նչ է նստել թելի վրա և բաժակի հատակին։

ԻՆՉՊԵՍ ՀԵՌԱՑՆԵԼ ՋՐԻՑ ՆՐԱ ՄԵՋ ԼՈՒԾՎԱԾ ԳԱԶԵՐԸ

Աժխատանք 21. Մրգակը լցըրեք սառը ջրով և բերանը ծածկեք խցանով, վորի միջով անց ե կացված յեռկծունկ խողովակը լցըրեք և այս խողովակը ջրով և ապա խողովակի ծայրը մտցրեք ջրով լցված և զլիավայր շուռ տված և վորձանոթի մեջ (Նկ. 5)։ Այս բոլորը պատրաստելուց հետո տաքացրեք Ա. սրվակը սպիրտայրոցով (կամ դաղայրոցով)։ Տաքացնելու ժամանակ ջրի մեջ յեղած ողը պղպջակներով դուրս կգա Գ խողովակի ծայրից և մասնելով

Բ փորձանոթի մեջ դուրս կհանի այնտեղի ջուրը։ Շարունակեք տաքացնել այնքան, նկ. 5 Ջրի մեջ լուծված ողի անջատում. Ա) Մրգակը, Բ) փորձանոթը, Գ) կոր խողովակը

կհանի այնտեղի ջուրը։ Շարունակեք տաքացնել այնքան,



մինչև ողի անջատումը դադարի: Ա. սրվակի բերանից հանեք խցանը և բերանը նորից փակեք մի սեղնե խցանով սիլենի կերպով: Ա. սրվակի մեջ դուք կունենաք ջուր առանց ողի: Այդ ջրի մեջ ձուկ կամ այլ ջրային կենդանի գցեք. գցեք ջրի մեջ նաև այդ կենդանու համար կերակուր: Մի քանի ժամ անցնելուց հետո տեսնեք թե ի՞նչ է պատահել ձեր գցած կենդանու հետ և բացարեցեք յերեվոյթը:

ԶՈՒՐԸ ՎՈՐՊԵՍ ԼՈՒԾԻՉ

Աշխատանի 22. Վերցրեք հինգ փորձանոթ և յուրաքանչյուրը $\frac{1}{2}$ մասը լցրեք ջրով: Առաջին փորձանոթի մեջ գցեք մի կտոր կերակրի աղ, յերկրորդի մեջ՝ շաքարի կտոր, յերրորդի մեջ՝ պղինձ արջասպի կտորներ (կապույտ շիր), չորրորդի մեջ՝ ծծումբ, հինգերրորդի մեջ՝ մի կտոր կավիճուր ցնցեք բոլոր փորձանոթները: Յեթե ուշ հալվեն, փորձանոթները տաքացրեք: Զեր վերցրած նյութերից զորմնք են լուծվում ջրի մեջ:


ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԻ



Աշխատանի 23. Վերցրեք 10 գրամ անագ (կլայեկ), 5 գր. կապար (արձիճ) դրեք հախատապակյա տիգելի (հալոց) մեջ, վրան քիչ անուշադր ցանեք և տաքացրեք սպիրուայրոցի վրա (նկ. 6): Տաքացնելու ժամանակ ապակի ցողով շարունակ խառնեք, վար մետաղն և շուտ հալվում: Մետաղների նկատմամբ հալումը տիգելի հալվելուց հետո, հալվածքն ածեք մի կարի մեջ: Դապարի մեջ (կաղապարը կարող եք պատրաստել և կալից): (Տես նկ. 7): Համեմատելու համար ստացած խառնուրդի հալման կետը մաքուր անագի և կապարի հալման կետերի հետ, հետեւյալ աշխատանքը կատարեք:

Աշխատանի 24. Վերցրեք մի քիչ մաքուր անագ, մի փոքր կտոր մաքուր կապար և մի քիչ ել՝ 23 աշխատանքից ստացած խառնուրդից, դրեք հախատապակյա տիգելի կափարիչների վրա առանձին-առանձին և տաքացրեք: Վորն և շուտ հալվում, անմազը, կապարը, թե սրանց խառնուրդը:

Աշխատանի 25. Թասի մեջն ածեք մի կաթիլ սնդիկ և ապա վերցնելով մի կտոր մաքուր ցինկ կամ պղինձ, կտորով նրա վրա սնդիկ քսեք: Ցինկի կամ պղինձի վրա կստանաք ամալգամ: Ամալգամ ընդանրապես կոչվում և սնդիկի և մետաղների խառնուրդը:



Նկ. 7 Հալվածքը կաղապարի մեջ ածեք:

ՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

ԶՈՒՐԸ ԲՆԱՌԻԹՅԱՆ ՄԵՋ, ԶՐԻ-ԲԱՄԵԼԻ ՅԵՎ ԹՈՐԵԼԻ

Զուրը բնության մեջ չափազանց շատ տալածված նյութ ե: Յերկրի մակերեւույթի մոտ $\frac{3}{4}$ մասը ծածկված է ջրով, վոր լցում և յերկրի մակերեւույթի վրա գտնվող փոսերը, առաջ են բերում գետեր, առվակներ, լճեր, ծովեր և հոկա ովկիանոսներ: Մեծ քանակությամբ ջուրը, գոլորշիների ձևով, գտնվում ե մթնոլորտում, իսկ կարծր վիճակում—ձյան ու սառույցի ձևով—նա ծածկվում ե բեկեռային յերկրների բարձր լեռների գագաթները: Զուրը վոչ միայն յերկրի մակերեւույթի վրա յետ տարածված, այլ նաև յերկրի խորքերում: Հողի, լեռնային տեսակների մեջ ևս մեծ քանակությամբ ջուր կա:

Բացի այդ, բոլոր կենդանի եյտկների՝ բույսերի ու կենդանիների (վորոնց թվում և սարդը) կշռի 60-ից ավելի տոկոսը բաղկացած է ջրից: Առանց ջրի չի կարող գոյություն ունենալ և վոչ մի կենդանի եյտ:

Չուրը շափականց անհրաժեշտ նյութ եւ վոչ միայն որդանական աշխարհի մարմինների գոյության համար, այլ և մեր առորյա կյանքում, արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ և գիտական աշխատանոցներում:

Չուրն, ավելի ճիշտ, ջրային գոլորշիները շարժում են ֆարբեկների և գործարանների հսկա շարժիչները: Այդ նույն գոլորշիներն են, վոր հսկայական տարածություններ են ուղարկում գնացքները, շոգենավերը, ԽՍՀՄ ելեկտրոֆիզիայի վիթխարի պլաններն իրականացնելու համար, ուղարկում են՝ արագ հսոսող կամ բարձր տեղից թափող ջրի եներգիայով—«սպիտակ ածուխով»—հսկա հիդրոելեկտրոկայաններում ելեկտրական եներգիա ստանալու համար: Ցեղ, վերջապես, շինարարը նույնպես մտահոգված եւ լավ վորակի ջուր գտնելու՝ շինարարական կապող նյութերի շաղախներ պատրաստելու համար:

Չուրն ընդունակ ե իր մեջ շատ նյութեր լուծելու, այդ պատճառով ել նա բնության մեջ յերբեք բոլորովին մաքուր վիճակում չի լինում:

Բնության մեջ յեղած ջրերից ամենամաքուրը անձեւի և ձյան ջուրն ե համարվում, վոր առաջանում ե մթնոլորդում յեղած ջրային գոլորշիների խոտացումից: Այս ջըրերն ևս իրենց մեջ լուծված զագեր և որգանական փոշիներ են պարունակում: Այնպես վոր, բնական ջըրերն իրենց մեջ միշտ զանազան խառնուրդներ են պարունակում:

Զանազան տեղերից վեցրած ջըրերն ունեն առընդունակություններ: Նրանք լինում են կոշտ և փափուկ*).

* Կոշտ ջուր են կոչվում այս ջըրերը, վորոնք իրենց մեջ մեծ քանակությամբ կալցիում և մագնեզիումի տեղեր են պարունակում: Կոշտ ջըր հետ սազո՞նը փրփուր չի տալիս: Փափուկ ջուրը՝ կոշտի հանդեպ հակառակ հատկություն ունի:

Կան աղբյուրներ, վորոնց ջուրն ոժտված ե բուժիչ հատկություններով: աղբյուրներ ել կան, վորոնց ջուրն անհաճություն և արձակում: Ծովերի և մի քանի լճերի ջուրն աղի կամ դառնաղի համ ունի: գետերի և մի քանի լճերի ջուրն աղամ դառնաղի համ ունի: գետերի ջուրը թթվաշենք է:

Բնական ջրերի յեղած այդ ուրբերությունը բացատրվում ե նրանով, վոր արքերի ջրերի մեջ լուծված են լինում տարբեր նյութեր և դրանից ել ջուրն այն հատկությունն ե ստանում, ինչպիսի հատկություն ունի նրա մեջ լուծված նյութերը:

Ջրի մեջ լուծվում են պինդ, հեղուկ և գաղային մարմիններ: Լինում են և այնպիսի նյութեր, վորոնք ջրի մեջ չեն լուծվում, նրանց մասնիկները ջրի մեջ կախված վիճակումն են գտնվում և առաջ են բերում պըղտորություն: Յերբեմն այդ մասնիկներն այնքան մանր են լինում, վոր հասարակ տչքով չեն յերելու: Սակայն յերբ մանրադիտակով դիտում ենք, նրա մեջ աեսնում ենք կավի, ավազի խիստ մանրիկ մասնիկներ և բազմաթիվ բակտերիաներ: Այդ բակտերիաների մի մասը (վնասաբերները) ջրի հետ ներս մտնելով մարմնի մեջ, պատճառ են դառնում զանազան հիվանդությունների (վորովայնային տիֆ, խողլերա և այլն): Պարզ ե, վոր այդպիսի ջուրը նաև քան խըմելը պետք ե յեռացնել: Վորպեսզի միկրոբները վոյչնչանան: Բնակչության ջուրը մատակարարելու գործում ջրի զտումն ամենակարենի հարցն ե կազմում: Մեծ ուշադրություն են դարձնում ջրի զտման վրա և գիտական աշխատանոցներում, և հիվանդանոցներում, և զեղատներու և զանազան արտադրություններում:

Պղտոր ջրի մեջ լողացող մասնիկները հեռացնում են ջուրը քամելով: Վորպես քամիչ գործ են ածում ծծան թուզի, ավազ, ածուխ, ծակոտկեն քարեր, կավե ամաններ:

Մեծ քաղաքների ջրմուղների քամոցներում գործ են ածում մեծահատիկ և փոքրահատիկ ավազ:


Զրի մեջ լուծված պինդ նյութերը քամելով հեռացնել չենք կարող (աշխ. 1): Լուծված պինդ նյութերը հեռացնելու համար ջուրը պետք է գոլորշիցնել: Յեռացնելու ժամանակ ջուրը դոլորշիանում է, իսկ ամանի տակ մնում են նրա մեջ լուծված պինդ նյութերը (աշխ. 2): Գոլորշիները հավաքելով և սառեցնելով սաացվում է մաքուր թորած ջուր, վորը համ չի ունենա, ինչպիսի ջրից ել ստանալու լինենք (դառը, աղի, թթվաշ), վորովհետեւ նրա մեջն այլես լուծված վիճակում պինդ նյութեր չկան: Թորած ջուրը կարող է պարունակել իր մեջ լուծված վիճակում զանազան տեսակի գազեր (ոդ և այլն): Զուրը գազերից ազատելու համար, թորած ջուրը պետք է յեռացնել և այն ժամանակ կստացվի միանգամայն մաքուր ջուր:

Զուրը թորելու համար զանազան գործիքներ կան: Դըրանցից ամենապարզը ցույց է տրված 3-րդ նկարում: Գիտական աշխատանոցներում ջուրը թորելու համար գործածում են 8-րդ նկարում ցույց տված գործիքը, իսկ մեծ քանակությամբ ջուր թորելու նպատակով գործ են ածում թորման ապարատ, վորը պատկերացված է 9-րդ նկարում:


Թորած ջրի համկուրութեաները: Թորած ջուրն, ինչպիսի ջրից ել ստանալու լինենք, մի մթնոլորտային ճնշման տակ յեռում և միշտ 100° ($^{\circ}\text{C}$): Իսկ յերբ ջրի մեջ լուծված են լինում պինդ մարմիններ, այն ժամանակ նույն ճնշման տակ ջուրը 100° -ից բարձր սստիճանում է յեռում: Որինակ, կերակրի աղով հագեցած ջուրը յեռում է $108,8^{\circ}$, իսկ սառում է $-22^{\circ}, 4^{\circ}$ -ի մի խորանարդ սանտիմետր թորած ջրի ծանրությունը մետրական սիստեմի մեջ համարվում և ծանրության միավոր և կրչվում է գրամ:

Թորած ջրի 100° -ում յեռալու և 0° -ում սառելու հատկությունից ոգտվելով, պատրաստում են օնդիկային ջերմաչափ:

Թորած ջուրը դործ են ածում լարարասորիաներում և գեղատներում: Խմելու համար պիտանի չե (ինչնէ):



Նկ. 8 Աշխատանոցներում ջրի բորբան համար վործ ածվող գործիք:



Նկ. 9 Թորման ապարատ:

Ջրի մեջ լուծված գաղերը նույնպես կարելի յէ հեռաց-
նել՝ զուրբ տաքացնելով։ Յերբ ջուրը տաքացնում են մին-
չև յեռալը, նրա միջից պղպջակներ են զուրս գալիս, այդ
պղպջակները ջրի մեջ լուծված գաղերն են, վորոնք տաքու-
թյունից լայնանալով հեռանում են ջրից (աշխ. 9):

Գաղեր կան, վորոնք լուծվում են ջրի մեջ ճնշման տակ,
իսկ յերբ հեռացնում են ճնշումը, գաղերը հեռանում են:
Որինակ, լիքոնադի, սելտերական, գարեջրի, կվասի մեջ գա-
ղերը լուծվում են ճնշման տակ, յերբ խցանը հանում են
շաբաթից, այսինքն յերբ հեռացնում են ճնշումը՝ գաղը
հեռանում է հեղուկից:

Մենք արդեն իմացանք, վոր ջրի մեջ լուծվում են պինդ,
հեղուկ և գաղային մարմիններ։ Այսուղ ակտոք և ավելաց-
նել այն, վոր ըոլոր մարմիններն ել միատեսակ չեն լուծ-
վում։ Որինակ, կիրը, կավիճը, գաճը լավ չեն լուծվում; իսկ
աղը, շաքարը լավ են լուծվում։ Կան և մարմիններ, վորոնք
ջրում բոլորովին չեն լուծվում, որինակ, յերկաթ, պղինձ,
և այլն։

ՀԱԴԵՑԱԾ, ԶՀԱԳԵՑԱԾ ԼՈՒՇՈՒՅԹ ՅԵՎ ԲՅՈՒՐԵԴԱՑՈՒՄ

Զուրն իր մեջ նյութն անվերջ լուծել չի կարողանում։
Նո լուծում ե նյութի վորոշ քանակություն, վորից հետո
այլև չի լուծում և նրա մեջն ածած նյութը նատում և
ամանի տակը (հիշեք 7-րդ աշխատանքը)։ Այդպիսի լուծույ-
թը կոչվում է հագեցած լուծույթ։ Սառը վիճակում հագեցած
լուծույթը տաքացնելու դեպքում, դառնում ե վոչ հագեցած
կամ չհագեցած լուծույթ, վորն ընդունակ է իր մեջ նյութի
նոր քանակություն լուծելու մինչև նորից հագենալը։ Այս-
տեղից պարզ ե, վոր սառը վիճակում ջուրը ավելի քիչ
նյութ է լուծում, քան տաքացրած ժամանակ (աշխ. 8):

Բարձր բարեխանության մեջ հագեցած լուծույթը, բա-
րեխանության իջնելու դեպքում, իրենից անջատում է լուծ-
ված նյութի մի մասը, վորը և նստում է ամանի հատակին՝

պինդ նյութերի ձևով, վորոնք կանոնավոր բազմակողմա-
նու ձև ունեն և բյուրեղներ են կոչվում։ Բյուրեղացման
միջոցով տեխնիկայում և լարաբատորիաներում զանազան
նյութեր են ստանում մաքուր վիճակում։

Հեղուկների մեջ, ինչպես արդեն գիտենք, լուծվում են և
հեղուկները։ Որինակ, ջրի մեջ լավ լուծվում ե սպիրուլ,
լուծվում ե նաև նավթը, բայց շատ չնչին չափով։ Սակայն
կան հեղուկներ, վորոնք իրար մեջ չեն լուծվում։ Դրանք
են՝ ջուրը և սնդիկը, ջուրը և յուղը, նավթը և սպիրուլ
և այլն։

ՀԱՄԱՉՈՒԿՎԱԾՔՆԵՐԻ

Հեղուկների նման լուծույթներ են տալիս և մետաղնե-
րը։ Յերբ հալված մետաղները խառնում են իրար, սրանք
մասսամբ լուծվում են իրար մեջ և առաջ բերում մետաղնե-
րի խառնուրդ, վոր կոչվում ե նաև ածուլվածք։ Համաձուլվածք-
ները վոչնչով չեն տարրերվում հեղուկների լուծույթնե-
րից, սիայն զանազանությունն այն ե, վոր համաձուլվածք-
ները գտնվում են պինդ վիճակում։

ՀԱՄԱՉՈՒԿՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Համաձուլվածքները տեխնիկայի մեջ մեծ գործածու-
թյուն ունեն։ Տեխնիկայում վոչ մի մետաղ գործ չի ածվում
մաքուր վիճակում, այլ համաձուլվածքի ձևով, վորովհետեւ
համաձուլվածքները շատ արժեքավոր հատկություններ
ունեն։ Այսպես, որինակ, հեշտ են հալվում (հիշեք 12-րդ
աշխատանքը), ավելի կայուն են և զանազան նյութերի
ազդեցության քիչ են յենթարկվում, քան մաքուր մետաղ-
ները։ Համաձուլվածքների թիվը շատ ե, մի քանի տաս-
նյակ։ Հիշենք նրանցից մի քանիսը։

1. Բրոնզ—սա պղնձի և անագի համաձուլվածքն ե, վոր
ահագին դեր է կատարել մարդկային քաղաքակրթության

մեջ: Պղնձից և անագից բացի, մի քանի այլ տեսակի բրոն զի կազմության մեջ մտնում են՝ ցինկ, կապար և ալյումին:

Բրոնզը բաղմապիսի գործածությունն ունի: Գործ են ածում արձաններ, թնդանոթներ, դանդեր և մեքենաների մասեր պատրաստելու համար:

2. Արույր (լատուն) կամ գեղին պղինձ—կարմիր պղինձի և ցինկի համաձուլվածքն է: Արույրը գործ են ածում հետայեններ, պրիմումներ, կահույք, զարդեր, գուան բռնիչներ և այլն պատրաստելու համար:

3. Նեյզիլբեր կամ նոր արծաթ—սա պղնձի, նիկելի և ցինկի համաձուլվածքն է, վոր ունի չափազանց գեղեցիկ դույն: Նրանից պատրաստում են՝ գլաներ, սպիտակ հետայեններ, սեղանի զանազան իրեր և այլն:

Պղնձի, արծաթի և ալյումինի համաձուլվածքն է, այժմյան գործածվող արծաթե հրամը:

Վուկու, արծաթի և պղնձի համաձուլվածքից են պատրաստում զանազան թանգարին իրերը:

Մետաղները համաձուլվածքներ են տալիս վոչ միայն մետաղների հետ, այլև վոչ մետաղների հետ: Որինակ ծծըմբի, ածխածնի և այլ: Մետաղների մեջ ամենակարևոր տեղը բռնող յերկաթը, պողպատը և չուգունը—յերկաթի և ածխածնի համաձուլվածքներ են: Փափուկ յերկաթը պարունակում է 0,5%, պողպատը՝ 0,5—1,8%, չուգունը՝ 2,3—5% ածխածնի:

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ նշանակություն ունի ջուրը կյանքի և արդյունաբերության համար.

2. Բնության մեջ բոլորովին մաքուր ջուր պատահում եք վոչ:

3. Ի՞նչպիսի ջրեր կան բնության մեջ և ի՞նչն է նրանց արբերության պատճառը.

4. Ի՞նչ նյութեր են լուծվում ջրի մեջ.

5. Ի՞նչն է հանդիսանում ջրի պղտորության պատճառը. 6. Ի՞նչպես կարելի յե հեռացնել ջրեց նրա մեջ չլուծված նյութերը.

7. Ի՞նչպիսի » » » » » լուծված պինդ նյութերը.

8. Վեր ջուրն ե կոչվում թորած ջուր և ի՞նչ հատկություններ ունի:

9. Ի՞նչպիսի հեռացնել ջրեց նրա մեջ լուծված գաղերը.

9. Վորն ե կոչվում հագեցած լուծույթ և վորը չհացած.

11. Վեր հեղուկներն են լուծվում իրար մեջ լավ, վորոնք վատ և վորոնք բոլորովին չեն լուծվում:

12. Վորնք են կոչվում համաձուլվածքներ: Ի՞նչ հատկությունն է գործադրություն ունեն համաձուլվածքները:

13. Թվեցեք ձեզ ծանոթ համաձուլվածքներից մի քանիս

14. Ի՞նչ համաձուլվածք են յերկաթը, պողպատը և թուղը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 3

Նախորդ առաջազրության մեջ մենք ծանոթացանք բնության սեղ յեղած ջրերին և իմացանք նրանց տարրերության պատճառները: Ծանոթացանք նաև ջուրը քամելու և թորերու յեղանակներին, ինչպես և թորած ջրի հատկություններին:

Այս առաջազրությամբ մենք պետք ենք ծանոթանանք ջրի բաղադրության հետ, այսինքն՝ ի՞նչ նյութերից են կազմված ջուրը և ինչպես կարենի յե այն վերլուծել իր բաղադրիչ մասերի: Դրա հետ միաժամանակ կպարզենք նաև «բարդ և պարզ նյութեր» հասկացողությունը: Ապա պետք ենք սնթանանք ջրի բաղադրիչների մասը կազմող ջրածին գաղին, նրա ստանալու յեղանակներին, հատկություններին և ոգտագործմանը: Կառվարենք նաև մի քանի տարրեր անուններ, իսկ վերջում կծանոթանանք ունակցիաների տեսակներին:

Առաջադրած խնդիրները մոտիկից ուսումնասիրելու համար հետևյալ աշխատանքները պետք են կատարել:


ԶԲԻ ՎԵՐԼՈՒԹՈՒՄԸ ԵԼԵԿՏՐՈԿԱՍՆ ՀՈՍԱՆՔՈՎ

Աւխատանք 1. Յեթե տեղում ունեք համապատասխան գործիքներ, ապա ջուրը կարող եք վերլուծել իր բաղադրիչների: Դրա համար պետք է վերցնեք նկ. 1-ում ցույց տված գործիքը: Չափարաձև անոթը լցրեք կիսով չափ մաս-

քուր ջրով, կաթեցրեք նրա մեջ մի քանի կաթիլ ծծմբաթթու կամաղաթթու: Հետո վերցրեք 2 հատ փորձանոթ, Բ. Բ. լցրեք նույն ջրով և գլխիվայր դրությամբ շուռ տվեք Ա.

Ա. ելեկտրոդների վրա, ինչպես այդ ցույց են տված նկարում:

Այդ բոլորը պատրաստելուց հետո ելեկտրոդները միացրեք ելեկտրական անփոփոխ հոսանքունեցող աղբյուրի հետ: Այդպիսի հոսանքի աղբյուրը կարող է ծառայել ակնումուլյատորը կամ գալվանական ելեմենտի մի մարտկոց:



Նկ. 1. Ջրի վերլուծումը գալվանական հոսանքով.
Ա.Ա. (ելեկտրոդներ Բ. Բ.) փորձանոթներ՝ լիքը շատ անշահ քանակությամբ ծծմբաթթու պարունակող ջրով:


Վերցրած յերկու փորձանոթների մեջ գաղերը հավասար ծավալով են ստացվել, թե վոչ: Առկայծող փայտիկով փորձեք փոքր ծավալով գաղը. ի՞նչ հատկություն ունի: Վառված լուցկիով փորձեք մեծ ծավալով գաղը. ի՞նչ է լինում:

Առավող գաղը ջրածինն է: Ուրեմն ի՞նչ գաղերից են բաղկացած ջուրը:

ՄԵՏԱԼՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԶԲԻ ՎՐԱ

Աւխատանք 2. Ունելիքով հանեք նավթի մեջ պահպատարիում մետաղից մի կտոր (սիսենի մեծության), փաթաթեք մի բարակ շորի կտորով և արագ կերպով մտցրեք ջրով լցված և գլխիվայր լցով մ տաշտի մեջը շուռ տված

մի լայն փորձանոթի մեջ (նկ. 2): Կառաջանան գաղի պըղ-
պջ ակներ և բարձրանալով վեր՝ դուրս կմղեն փորձանոթից



Նկ. 2. Նատրիումի միջոցով ջրածին
ստանալը

Նկ. 3. Ջրածինը վառվում
և փորձանոթի բերանին:

Հուրը: Փորձանոթը գաղով լցվելուց հետո, հանեք ջրից և
առանց նրա զիրքը փոխելու մոտեցրեք նրա բերանին վառ-
ված լուցին: Ի՞նչ եք նկատում (նկ. 3): Ի՞նչ գաղ և հե-
ռանում ջրեց յերբ նրա մեջ զցում են նատրիում միտաղը:
Տաշտի ջրի մեջ գցեք կարմիր լակմուսի թուղթը, ի՞նչ դու-
նափոխություն եք նկատում (յեթե լակմուսն անմիջապես
չդունափոխվի, քիչ սպասեք):

Աչխատանք 3. Կրկնեցեք 2-րդ աշխատանքը, բայց այս
անդամ նատրիումի փոխարեն վերցրեք կալցիում մետաղի
կտորներ: Կալցիումի կտորներ պետք են փաթաթել շորի մեջ
և ապա ունելիքով բռնելով՝ մտցնել փորձանոթի մեջ: Այս
փորձի ժամանակ տաշտի ջուրը դարձյալ փորձեք լակմուսի
կարմիր թղթով: Ի՞նչ գույն և ստանում կարմիր լակմուսը
(յերբ նատրիումը կամ կալցիումը ջրի մեջ ենք զցում, նրանք
դուրս են հանում ջրեց ջրածինը և իրենք միանալով ջրի
մասցը դների հետ կազմում են մի նոր նյութ, վոր կարմիր
լակմուսը կապտացնում են: Այդպիսի նյութերը կոչվում են
կծուներ կամ հիմքեր, վորոնց հետ մանրամասն կծանոթա-
նանք հետագայում):

ԹԹՈՒՆԵՐԻՑ ԶՐԱԾԻՆ ՍՏԱՆԱԼԸ

Աչխատանք 4. Վերցրեք մի փորձանոթ, մեջը զցեք մի
քանի կտոր ցինկ և վրան ավելացրեք նոսր ծծմբական թլ-
թու: Յերբ ցինկն սկսի քայքավկել, փորձանոթի բերանին
մոտեցրեք վառված լուցին: Ի՞նչ և առաջանում: Պայթող
այդ գաղը ջրածնի և թթվածնի խառնուրդն ե (ցինկի քայ-
քայման ժամանակ առաջանում ե տաքություն): Շոշափեցեք
փորձանոթը ձեռքով:

Աչխատանք 5. Կրկնեցեք 4-րդ աշխատանքը, բայց այս
անդամ ծծմբական թթվի փոխարեն վերցրեք աղաթթու:

Աչխատանք 6. Սարքավորեք 4-րդ նկարում ցույց տված
գործիքը: Դ սրվակի մեջ զցեք ցինկի կտորներ, բերանը



Նկ. 4 Ջրածին գաղի վրա պահպաղ սառը բաժակի պատերի վրա
նստած են ջրի կաթելները:

Փակեք Ա. խցանով և ապա ձագարի միջով սրվակի մեջն ա-
ծեք նոսր ծծմբական թթու այնքան, վոր ծածկի ցինկի կը-
տորները: Ցինկի և ծծմբական թթվի փոխազդեցությունից

Կարտադրվի ջրածին գաղ և անոթի ողի հետ միասին դուրս կա Գ խողովակից: Մի բողե սպասելուց հետո գաղը հա- վաքեք գլխիվայր գրությամբ պահած մի փորձանոթի մեջ և օրվակից հեռու զահելով փորձեք վառված լուցկիով. յե- թե պայտեց, նշանակում ե գեռ մաքուր ջրածին չե, Փոր- ձեք շ-րդ անդամ և յերբ համողված կինեք վոր սրվակից մաքուր ջրածին և դուրս գալիս (պայթյուն կամ շառաչ չպետք ե լինի), վառեցեք խողովակի ծայրից դուրս յեկող ջրածին գաղը: Ինչ գույնի բոցով ե այրվում: Պահեցեք ջր- ածնի բոցի վրա չոր պատերով մի սառը բաժակ (կարող եք պահել և յերկաթի կտոր): Ինչ ե նստում բաժակի պա- տերին: Ինչո՞վ եք բացատրում ջրի կաթիների առաջանալը:

Աժխատանի 7. Վերցրեք մի բանկա, լցրեք ջրով և բերա- նը ապակիով ծածկելով գլխիվայր շուռ տվեք ջրով լցրած տաշտի մեջ և ապա այդ բանկան լցրեք ջրածնով: Ջրած- նով լցրած բանկան հանեք ջրից և բերանը ապա- կիով ծածկած վ հակում ուղիղ դիրքով դրեք սեղանի վրա: Հետո վերցրեք նման մի դատարկ բանկա և բերանը ցած դարձրած՝ դրեք ջրածնով լցրած բանկայի բերանին և զգուշությամբ հեռացրեք բանկայի բերանին դրած ապա- կին: Հետո վառեք մոսը և մոտեցրեք վերևի և ներքեվի բան- կաների բերանին առանձին-առանձին, բայց առանց փո- խելու բանկաների դիրքը: Վո՞ր բանկայի մեջ և դանդում ջրածնը: Բացատրեք պատճառը.

ՇԱՌԱԶՈՂ ԳԱԶ ՍՏԱՆԱԼԸ

Աժխատանի 8. Վերցրեք կոնյակի կամ ողու կեռ շիշը լցրեք ջրով և գլխիվայր շուռ տվեք ջրով լցված մի տաշտի մեջ: Այսուհետեւ շիշը $\frac{2}{3}$ մասը լցրեք ջրածին գաղով, իսկ $\frac{1}{3}$ մասը թթվածնով: Գաղերով լցված շիշը, բերանը խցա- նած վիճակում, հանեք ջրից և ապա շիշը մի քանի անգամ շուռ- մուռ տվեք, վորպեսզի գաղերը լավ խառնվեն իրար: Հետո ըռնեք շիշի մատակի մասից, խցանը հանեք և շիշը բերանը մոտեցրեք սպիրտայրոցի բոցին: Ինչ ե լինում:

ՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԳԱՐԶ ՑԵՎ ԲԱՐԴ ՆՅՈՒԹԵՐ

Առաջին աշխատանքի ժամանակ մենք իմացանք, վոր յերբ ելեկտրական հոսանք և անցնում ջրի միջով, ջուրը բաժանվում և 2 գաղերի ջրածնի և թթվածնի: Առաջին ա- ռաջադրության մեջ թթվածին ստանալու ժամանակ, յերբ տաքացնում եյինք սնդիկոքսիթը, ստանում եյինք մա- քուր սնդիկ և թթվածին գաղ, թեթե ելեկտրական քուր սնդիկի և թթվածին գաղ, թեթե սնդիկի կամ թթվածնի կամ ջրա- ծնի միջով, կամ տաքացնենք թթվածինը. Ջրածնը: Աըն- դիկը, նման յերկույթ չենք նկատի, այսինքն սնդիկը, թթվածինը ուրիշ նոր նյութերի չեն բաժանվի:

Այս փոքրձերից հետո այն յեզրակացության ենք գալիս վոր ջուրը և սնդիկոքսիդն իրենց կազմությամբ տարրեր են, քան թթվածինը, ջրածնը, սնդիկը: Ջուրը և սնդիկոք- սիդը մենք կարողանում ենք վերլուծել նոր նյութերի, իսկ սնդիկը, թթվածինը և ջրածնը նոր նյութերի վերլուծել չենք կարողանում:

Այդ ախսակետից ել նյութերը բաժանվում են 2 խսրի— պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութը, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ: Պարզ ե կոչվում այն նյութից, վոր կազմ- պարզ և բարդ:

Բարդ ե կոչվում այն նյութը, վոր բաղկացած և մի ք նի նյութերից և վորը կարելի յե վերլուծել իր բաղադրիչ մասերի: Որինակ, յերկաթոքսիդ, նա բաղկացած ե թթված- նից, սնդիկոքսիդ՝ բաղկացած և սնդիկից և թթվածնից: Նից, սնդիկոքսիդ՝ բաղկացած և սնդիկից և թթվածնից: Բարդ ե կոչվում կոչվող մետաղից, քլորից և թթվածնից, զուրը բաղկացած ե թթվածնից և ջրածնից:

Պարզ նյութերը քիմիապես միանալով իրար հետ, տալիս են բարդ նյութ (հիշեցեք ծծմբափոշու և յերկաթփոշու միա- ցումը առքացնելիս յերկաթի միացումը թթվածնի հետ՝ տաքացնելու ժամանակ), բարդ նյութ տարրալուծելով բա-

զաղբիչ մասերի՝ ստանում ենք պարզ նյութեր (հիշեցեք սընդէկոքսիդի վերլուծումը տաքացնելիս և ջրի վերլուծումը եւ լեքտրական հոսանքի ազդեցության տակ):

ԶՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

Յերկար ժամանակ ջուրը համարվում էր պարզ նյութ վորովհետև չիյին կարողանում տարրալուծել: Հետագայում, յերբ գիտությունն ավելի զարգացավ (19-րդ դարու կեսերին), փորձերի ընթացքում նկատվեց, վոր 1000 աստիճանից բարձր բարեխառնության մեջ ջուրը վերլուծվում է յերկու գաղային նյութերի: Նկատվել են այն, վոր ինչքան բարեխառնությունն ավելի յէ բարձրանում, այնքան ջուրն ավելի շատ է վերլուծվում գաղային նյութերի:

Զուրը հեշտ է վերլուծվում ելեկարական հոսանքով՝ յերկու գաղային նյութերի, վորոնցից մեկը մեղ արդեն ծանոթ թթվածինն է, իսկ մյուսը ջրածինը: Ջրածինը ծավալով յերկու անգամ մեծ է լինում, քան թթվածինը (ինչպես, այդ տեսաք 1-ին աշխատանքից):

Թթվածին ստանալու յեղանակներին և նրա հատկություններին մենք արդեն ծանոթ ենք: Հիմա յել ծանոթանանք ջրածին ստանալու յեղանակներին, ջրածնի հատկություններին և ոգտագործմանը:

ԶՐԱԾԻՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

Ջրածինը բնության մեջ աղատ վիճակում շատ չնշին քանակությամբ և լինում, այն ել մթնոլորդի ամենավերին շերտերում: Ջրածինն աղատ վիճակում յերբեմն գտնվում է գետնի խորքերից և հրաբուխներից անջատվող բնական գաղերի մեջ:

Բնության մեջ ջրածինը զլիավորապես գտնվում է միացությունների ձևով: Այդ միացություններից առաջին տեղը ընունվում է ջուրը, վորի մեկ ինսերորդ մասը կազմում է ջրածինը: Հետո ջրածինը մտնում է բույսերի և կենդանի-

ների մարմնի բաղադրության մեջ, ինչպես և նավթի ու շատ այլ հանքերի բաղադրության մեջ:

Զրածին ստացումը: Զրածին կարելի յէ ստանալ ջրից՝ ելեկ տրական հոսանքով տարրալուծելով կամ 1000 և ավելի աստիճան տաքացնելով: Բացի այդ, ջրից կարելի յէ ջրածին ստանալ և շատ ոքսիդացող մի քանի մետաղների ոգնությամբ, ինչպես որինակ, կալիումի, նատրիումի, կալցիումի և մերկաթի:

Այս մետաղները սովորական բարեխառնության մեջ ջըրից հեշտությամբ խլումեն թթվածինը, իրենք միանում նրա հետ և անջատում են աղատ ջրածին (հիշեցեք 2-րդ, 3-րդ աշխատանքները*):

Լաբորատորիաներում ջրածինը սովորաբար ստանում են թթուններից, նրանց վրա ներգործելով ցինկ մետաղով (հիշեցեք 4-րդ և 6-րդ աշխատանքները):

Զրածին ֆիզիկական ուսկուրյունները, Զրածինն անգույն, անհոտ, անհամ գաղ ե, հայտնի բոլոր գաղերից ամենաթթվածինն է: Նա ողից թեթև և 14,5 անդամ, իսկ թթվածնից 16 անգամ: Մի լիտր ջրածինը նորմալ պայմաններում կշռում է միայն 0,09 գրամ: Մինուս 241⁰-ում և ճնշան տակ ջրածինը կարելի յէ գարճակ հեղուկ: Յերբ այդ հեղուկն անորդ տարածության մեջ արագ կերպով գոլորշիացնում են, ստացվում է թափանցիկ բյուրեղների ձևով կարծր վիճակում ջրածին, վոր հալվում և մինուս 257⁰-ում:

Զրածին ֆիզիկական հատկությունները: Զրածինի քիմիական հատկություններից ամենակարևորը այն է, վոր նա շատ հեշտությամբ միանում է թթվածնի հետ, այսինքն այրվում է՝ առաջացնելով մեծ քանակության ջերմություն: Զրածինը մաքուր վիճակում այրվում է թույլ մանիշակագույն բոցով (ողի հետ խառնված վիճակում պայթում է) և միանալով թթվածնի հետ՝ առաջացնում է ջուր: Որինակ, յերբ ջրածնի բոցի վրա սառը իր ենք պահում,

* Յերկաթը Զրից խլում և թթվածինը միայն շիկացած ժամանակ:

այդ մարմնի վրա ջրի կաթիլներ են առաջանում (հի հցեք 6-րդ աշխատանքը). Այս հանգամանքը ևս հաստատում է վոր ջուրը բաղկացած է ջրածնից և թթվածնից: Ուրեմն ջուրը ջրածնի ոքսիդն է:

Յերբ բարդ նյութի բաղադրությունը վորոշելու համար, նյութը տարրալուծում են բաղադրիչ մասերի (ջրի վերլուծությամբ ելեկտրական հոսանքով) կոչվում ե անալիզ. իսկ յերբ այդ նյութի բաղադրության մեջ մտնող տարրերը քիմիապես միացնելով իրացնույն նյութն են ստ սնում՝ կոչվում ե (սինթեզ):

Անալիզը և սինթեզը գիտական մեթոդներ են, վորոշումությամբ վորոշվում ե թե բարդ նյութերի բարակությունը և թե բազմաթիվ այլ յերևույթներ ու դրություններ:

ՇԱՌԱԶՈՂ ԳԱԶ


Յեթե մի ծագալ թթվածնին յերկու ծագալ ջրածնին խառնենք և այդ խառնուրդը մոտեցնենք կրակին, ուժեղ պայթյուն կառաջանա (աշխ. 8-րդ), ջրածնի և թթվածնի այդպիսի խառնուրդը կոչվում ե ռառաջաղ գազ:

ՋՐԱԾՆԻ ԿԻՐԱՌՈՒՄԸԸ

Մենք ագրեն իմացանք, վոր ջրածնը բնության մեջ հայտնի գաղերից ամենաթեթեվն է, այդ պատճառով ել ջրածնը ոգտագործում են ողանավագնացության համար՝ նրանով լցնելով ողապարիկները և դիրիժարլները: 5-րդ նկարում պատճերացված է դիրիժարլի լուսանկարը, վորի ներքեփ մասում յերեւում են պողպատյա զլանաձև անոթները՝ լցրած ջրածնով, վորի շնորհիվ դիրիժարլը բարձրանում ե վեր:

Ջրածնը վառվող զաղ է, այդ պատճառով ել նրանով լցված ողապարիկները և դիրիժարլները միշտ յենթակա լինում մեծ վտանգների: Այս հանգամանքը նկատի ու-

նենալով, վերջին ամանակներս ջրածնը փոխարինում են հելիում գազով, վորը թեպետ ջրածնից ծանր է չորս ան-




Նկ. 5.

գամ, բայց այն առավելությունն ունի ջրածնի հանդեպ, վոր նա բոլորովին չի այրվում:

Մոտ ժամանակներս նկատված ե, վոր յերբ ջրածնի հետ մոտ 15% հելիում են խառնում, ջրածնը զրկվում է բոցավառվելու ընդունակությունից: Այդ պատճտոով ել վերջերս հելիումի խառնուրդը ջրածնի հետ կամաց կամաց լայն կիրառում ե գտնում ողանավագնացության մեջ, վորի համար առանձին հելիումը բավական թանգ ե նստում:

Ջրածնը այրվելիս, ինչպես ասել ենք, մեծ քանակության ջերմություն ե առաջանում ոդում, 1000° , իսկ թըթի մեջում է առաջանալու համար առաջանական աստիճան:



Նկ. 6. Դուռական:

Ջրածնի մեջ՝ 2500 և ավելի աստիճան, գրա համար ել ջրածնի մեջ՝ ապահովագործում են տեխնիկայում՝ մետաղներ հալեցնելու, կորելու, ծակելու համար:

Զրածնա-թթվածնային բոցի աղղեցության առակ հալվում են ամենադժվարահալ մետաղները, ինչպես որինակ, պլատինը:

Թթվածնի հետ խառը յեղած ժամանակ, զրածինը, ինչպես գիտենք, պայթում եւ հանդիսաւ կերպով այրվող զրածնա-թթվածնային բոց ստանալու նպատակով գործադրում են մի գործիք, վոր նրա հնարողի անունով կոչվում եւ Դանիելի ծորակ, որի կտրվածքը ցույց եւ տրված երդ նկարում:

Այդ ծորակի ներքին Բ խողովակով՝ անցնում եւ ջրածին, իսկ արտաքին Ա խողովակով՝ թթվածին: Յերկու գաղերը խառնվում են իրար և ծորակի անցքի մոտ հանդիսաւ կերպով այրվում:


Դ-րդ նկարում ցույց եւ տրված յերկու բալոն (գլանաձև անոթներ), վորոնցից մեկը լցված եւ թթվածնով, մյուսը զրածնով: Դանիելի ծորակի միջոցով, զրածնա-թթվածնային բոցն ուղելով յերկաթյա տախտակի վրա, վերջինս հալելով՝ կը բռում, ծակում են:

8-րդ նկարում, նույն ջրածնա-թթվածնային բոցով մետաղ են ձուլում:

Զրածնա-թթվածնային բոց մետաղ են ձուլում:

Զրածնա-թթվածնային բոցն ոգտադործում են նաև ոպամական գործում, վորի միջոցով՝ հալելով՝ ծակում ու փշացնում են թշնամու տանկերը:

Վերջերս զրածինն ոգտագործում են նաև բուսական հեղուկ յուղերը պինդ վիճակում ստանալու համար: Այդ բանն իրականացնում են հեղուկ յուղերին զրածին միացնելով: Հեղուկ յուղերը պինդ վիճակի յուղերի փոխարկելու պրոցեսը կոչվում է յուղերի նիդրոզենիզացիա:



Նկ. 7 Զրածնա-թթվածնային բոց կտրում են յերկաթե տախտակը:

Զրածնա-թթվածնային բոցն ոգտադործում են նաև ոպամական գործում, վորի միջոցով՝ հալելով՝ ծակում ու փշացնում են թշնամու տանկերը:

Վերջերս զրածինն ոգտագործում են նաև բուսական հեղուկ յուղերը պինդ վիճակում ստանալու համար: Այդ բանն իրականացնում են հեղուկ յուղերին զրածին միացնելով: Հեղուկ յուղերը պինդ վիճակի յուղերի փոխարկելու պրոցեսը կոչվում է յուղերի նիդրոզենիզացիա:

Պինդ յուղերը, տեխնիկական տեսակետից ավելի արժեքավոր պրոդուկտներ են, քան հեղուկ վիճակում յուղերը: Բացի այդ պինդ յուղերը մարդու որգանիզմն ավելի հեշտ է յուրացնում, քան հեղուկ յուղերը: Այդ պատճառով ել ավելի պակաս արժեք ներկայացնող հեղուկ յուղերը (կտրվահատի կանեփի յուղը, փոկի (ՏЮԼԵՒ) ճարպը) պինդ վիճակի յուղերի փոխարկելու հարցը՝ տնտեսական խոշոր և կարևոր խնդիր եւ հանդիսանում:

Այդ խնդիրն ավելի կարելոր նշանակություն եւ ստանում մեզ մոտ՝ ԽՍՀՄ, վորտեղ հեղուկ յուղատու բույսերի (կտրվահատ, կանփի և այլն) կուլտուրաներն ավելի շատ են գարգացած, քան պինդ յուղեր տվյալ անասնաբուժությանը:



Նկ. 8.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԹԹՎԱԾԻՆ ՑԵՎ ՉՐԱԾԻՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Մենք արդեն իմացանք, վոր թե թթվածինը և թե զրածինը մեծ չափով ոգտագործում են տեխնիկայում մետաղներ հալելու, կտրելու, զողելու և այլն նպատակներով: Համեկանալի յե, վոր այդ աշխատանքների համար պահանջվում են նաև մեծ քանակությամբ զրածին և թթվածին: Իսկ ի՞նչպես և վերտեղից են ստանում պահանջվող քանակությամբ այդ գաղերը:

Նախ խոսենք թթվածնի մասին:

Այս բուլոր նյութերը (սնդիկ, ոքսիդ, կալիում, պերմանգանատ, բերտոլետյան աղ), վորոնք տաքացնելիս հեշտությամբ

արտադրում են թթվածին և վորպեսի նյութերից թթվածին են ստանում քիմիական փորձերի ժամանակ լաբորատորիաներում, սասսայական արտադրության համար նախ գործածական չեն և յերկրորդ, այդ նյութերից ստացած թթվածինը շատ թանգ է նստում:

Տեխնիկական նպատակների համար մեծ չափով և աժան յեղանակով թթվածին ստանում են ողից և ջրից:

Ողից թթվածին ստանում են հետևյալ յեղանակով. սկզբուց ողը հատուկ գործիքներով ցրտեցնելով և ճնշելով, դարձնում են հեղուկ. Հեղուկ ողը բաղկացած է համարյա ազոտից և թթվածնից: Ազոտի և թթվածնի յեռման կետերը տարբեր են, ազոտը յեն ե գալիս մինուս 195,7 աստիճանում, իսկ թթվածինը մինուս 183⁰: Յեկ ահա, յերբ հնարյակորություն են ստեղծում, վոր հեղուկ ողը գոլորշիանա, այն ժամանակ ազոտը շուտ ցնում և տակը մնում է համարյա մաքուր թթվածին: Հետո այդ թթվածինը ճնշման տակ մղում են մետաղյա բալոնների մեջ, վորոնցով և տեղափոխում են արտադրության վայրերը կամ այլ տեղեր՝ ոգտագործելու համար:

Թթվածին ստանում են նաև ջրից՝ ելեկտրական հոսանք անցկացնելով ջրի միջով, վորի աղդեցության տակ ջուրը տարրալուծվում ե՝ ջրածնի և թթվածնի: Այս յեղանակը հսկավական աժան գնով և մեծ քանակությամբ թթվածին ե տալիս:

Տեխնիկայում և այլ նպատակների համար ոգտագործվող ջրածինը մեծ քանակությամբ ստանում են գարճյալ ջրից, վերջնա ելեկտրոլիզի յենթարկելով: Պարզ ե, վոր գործարանական սարքավորումը, ջուրը ելեկտրոլիզի յենթարկելու համար շատ ավելի բարդ է, քան այն, վոր ցույց ե տված սույն առաջադրության 1-ին նկարում: Ստացած ջրածինը նույնպես ճնշման տակ լցնում են մետաղյա բալոնները և տեղափոխում ուր հարկն ե (բալոններից յերկուս՝ մեկը թթվածինով, իսկ մյուսը ջրածինով լցված պատկերացրած են № 3 առաջադրության նկարում):

Ջրից ջրածին ստանալու համար, ելեկտրական հոսանքոց բացի գործադրում են նաև մետաղները—սովորաբար յերկաթը: Հատուկ վառարաններում շիկացնում են յերկաթը և նրա վրայով անց են կացնում ջրի գոլորշիներ: Շիկացած յերկաթը խլում ե՝ ջրից նրա թթվածինը և օքսիդանում, իսկ ազատ ջրածինը խողովակներով մղվում ե առանձին տեղ: Այդ նույն վառարանում քիմիական այլ յեղանակներով վերականգնում են յերկաթը (այսինքն՝ աղատում են նրան թթվածնից) և ազատ նորից նրա վրայով ջրի գոլորշիներ են անցկացնում: Պրոցեսը այդ յեղանակով կրկնվում ե և ստացվում ե մեծ քանակությամբ ջրածին:

Վերջերս նկատել են, վոր ջրածնի մասսայական կիրառման համար ավելի ձեռնտու յենրան անջատել ջրածին պարունակող զանազան գաղերի խառնուրդից. որինակ, լուսատու գաղից: Լուսատու գաղը կակսի այրման վառարաններում առաջացած գաղերից, փայտի չոր թորման ժամանակ առաջած գաղերից և այլն:

Այդ գաղերից ջրածնի առանձնացնելու յեղանակը կայանում է նըանում, վոր հեղուկ ողի ոգնությամբ այդ գաղերի խառնուրդները ցրտեցնում են: Այդ պայմաններում գաղերը հեղուկանում են բացի ջրածնից, վորը և անբոլոր գաղերը հեղուկանում են բացի ջրածնից:

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՄՑԵՐ

1. Վար նյութն ե կոչվում պարզ նյութ (բերեք որի նակներ):

2. Վար նյութն ե կոչվում բարդ նյութ (բերեք որի նակներ):

3. Ի՞նչ կարելի յե անել բարդ նյութերը:
4. Ի՞նչպիսի նյութ ե ջուրը—պմբզ, թե բարդ:
5. Ի՞նչ յեղանակով կարելի յե վերլուծել ջուրը:
6. Ի՞նչ նյութեր են ստացվում ջրի վերլուծումից:
7. Զրի մեջ ջրածինը քմնի անգամ ծավալով մեծ թթվածնից:

9. Ի՞նչպես տարբերել ջրածինը թթվածնից:
10. Զուրը ջրածնի և թթվածնի մեխանիկական խառնուրդ է, թե քիմիական միացություն:
11. Ջրից ի՞նչ յեղանակներով կարելի յե ստանալ ջրածին:
12. Ել ի՞նչ նյութերից և ինչպես կարելի յե ջրածին ստանալ:
13. Ի՞նչ հատկություններ ունի ջրածինը:
14. Ի՞նչ և առաջանում ջրածինն այրվելիս և ի՞նչ և ապացուցում այդ յերեվույթը:
15. Ի՞նչ եան և շառաչող գազը:
16. Թմնի աստիճան ջերմություն և տալիս ջրածնի բոցը թթվածնի մեջ և ի՞նչի՞ համար են ոգտագուծում այդ բոցը:
17. Ի՞նչի՞ համար են ոգտագործում ջրածինը.
18. Ի՞նչ նյութերից և ի՞նչպես են ստանում տեխնիկայում գործածվող մեծ քանակության թթվածին և ջրածին:

ՄԵՏԱՂՆԵՐ ՅԵՎ ՄԵՏԱԼԻԴՆԵՐ (ԿԱՄ ՎՈՉ ՄԵՏԱՂՆԵՐ)

Մենք արդեն իմացանք վոր բնության մեջ յեղած մարմինները լինում են պարզ և բարդ և ասացինք վոր պարզ մարմինները կազմված են միայն մի նյութից, վորոնց ավելի պարզ նյութերի բաժանել չենք կարող, իսկ բարդ մարմինները կազմված են 2 և ավելի նյութերից: Բարդ նյութերը կարելի յե վերլուծել իրենց բաղադրիչ մասերի, այսինքն պարզ նյութերի (հիշեք սնդիկոքսիդի և ջրի վերլուծումը),

Բնության մեջ յեղած բոլոր պարզ նյութերը կամ ի՞նչ-պիս ասում են տարբերը կարելի և բաժանել յերկու խմբի—մետաղների յեվ մետալիդների (կամ վոչ մետաղների*):

* Բնության մեջ գտնվող տարբերը բոլորն ել միատեսակ տարածված չեն. Նյութեր կան վորոնք շատ են տարածված, նյութեր կան քիչ:

Յերկրագնդի և նրան ըրջապատող ողի մասնան գլխավորապես հետեւալ նյութերից ե կազմված:

Մետաղներ են կոչվում բոլոր այն տարբերը՝ վորոնք հետեւյալ ընդհանուր հատկություններն ունեն. 1) կուանելի յեն, 2) ունեն վորոշ փայլ (մետաղական փայլ), 3) ջերմության և եւելության լավ հաղորդիչ են, 4) ուվորական պայմաններում բոլորն ել պինդ մարմիններ են (բացառությամբ մնդիկի), վորն ունի մետաղական բոլոր հատկությունները, բայց սովորական պայմաններում գտնվում ե հեղուկ վիճակում), 5) հալվում են համեմատարար բարձր ջերմաստիճանում 6) համեմատարար բարձր տեսակարար կշիռ ունեն և այլն:

Այն տարբերը, վորոնք զուրկ են մետաղների ընդհանուր հատկություններից, կոչվում են մետալոփիդներ կամ վոչ մետաղներ:

Ստորև բերում ենք հաճախակի գործածական մի քանի մետաղների և մետալոփիդներին անունները, նրանց քիմիական նշանները, անդը բնության մեջ և գործադրումը (տես 40, 41 և 42 եջի աղյուսակները):

1. Թթվածին	49,5	տոնկոս
2. Սիլիցիում (կայծքար)	25,7	»
3. Ալյումին	7,5	»
4. Ցերկաթ	4,7	»
5. Կալցիում	3,4	»
6. Նատրիում	2,6	»
7. Կալիում	2,4	»
8. Մագնիսիւմ	2,0	»
9. Ջրածին	1,0	»

Մ Ե Տ Ա Դ Ն Ե Ր

Քաղաքացիություն	ԱՆՈՒԻՆԸ	Ցեղը բնութեան մեջ	Գլխավորապես ի թշի՞ համար և գործադրվում
Al	Ալյումին	Կավի մեջ	Կազմե շինվածներ, հալածավակի, վորպես մաքուր մետաղ, համաձուլվածքներ, ուլարամարին պատրաստելու համար:
Sn	Անտոդ	Անագաքարերի մեջ	Ամաններ կլայիեկելու, համածալվածքներ պատրաստելու և անտաղներ զողելու համար:
Pt	Արծաթ	Խնդնաբույս վիճակում	Զանազան իրեր, անոթներ, համաձուլվածքներ պատրաստելու, բժշկության մեջ (լյազիխ), լուսանկարչության գործում:
Fe	Ցերկար	Հանքերում	Չուռպուն, պողպատ, յերկաթ ստանալու և ներկերի համար:
K	Կալիում	Բնակուն հանքերում, աղերի մեջ	Պարարտացման համար և աղակի պատրաստելու գործում:
Ca	Կալցիում	Կրաքարի, գիպսի և փոսկորների մեջ	Շինարարության մեջ (հանգած կրի ձևով) ցեմենտ պատրաստելու համար և աղակու որդյունաբերության մեջ:
Pb	Կապար	Կապարի հանքերում	Ջրմուղների խողովակներ, համաձուլվածքներ պատրաստելու և կապարի սպիտակ (բելիլա) պատրաստելու համար:
Mn	Մանգան	Հանքերում	Մանգանական պողպատ պարաստելու համար:
Mg	Մագնիում	Հանքերում	Լուսանկարչության և բժշկության մեջ:
Na	Նոորիում	Կերտակը աղի մեջ	Սոդա, սապոն և աղակի պարաստելու համար:

Քաղաքացիություն	ԱՆՈՒԻՆԸ	Ցեղը բնության մեջ	Գլխավորապես ի թշի՞ համար և գործադրվում
Ni	Նիկել	Հանքերում	Համաձուլվածքներ պատրաստելու և նիկելագործելու համար:
Hg	Սուղիկ	Հանքերում	Բժշկության մեջ, ջերմաչոփ պատրաստելու և ամալգամերի համար:
Pt	Գլասին	Խնդնաբույս վիճակում	Համաձուլվածքներ և լուսուրական ամանեղին պատրաստելու համար:
Cu	Չորհած	Հանքերում և ինքնածին վիճակում	Ելեկտրոսեկտրիկայի մեջ, համաձուլվածքներ պատրաստելու և ամանների համար:
Bi	Վուլի	Խնդնաբույս վիճակում	Զանազան լինվածքներ, համաձուլվածքներ և զրամ պատրաստելու համար:
Zn	Ցինկ	Հանքերում	Համաձուլվածքներ, ցինկի սպիտակ պատրաստելու և յերկաթը ցինկպատելու համար:

ԳՀԱՎԱՐ ԹՀԱՅԻ	ԱՆՈՒՆԸ	Տեղը բնուրյամ մեջ	Գլուխորապես ինչի՞ համար և գործադրվում
N	Աղոստ	Օդում, կենդանական սպիտակուցների և աղողակների մեջ	Գյուղառնտեսության մեջ, պրպես պարարտանյութեւ ու ուզմական գործում պայմանացիկ նյութերը պատրաստելու համար:
C	Ածխածին	Բարածին բուսական և կենդանական մարմինների և նաևթի մեջ:	Վառելանյութ, ոստագործում են վորպես հակադաղ և հանցերից մետաղներ ստանալու համար. նաև մի քանի ոլլ արտադրությունների մեջ:
Br	Բըռմ	Մովային աղերում	Բժշկության և լուսանկարչության մեջ:
O	Թթվածին	Ռդում, ջրում և ոքիչներում	Մետաղագործության և բժշկության մեջ:
J	Ցող	Մովային ջրիմուռների մեջ	Բժշկության և լուսանկարչության մեջ:
S	Մծումբ	Ինքնաբույս վիճակում և հանցերում	Ծծմբական թթու պատրաստելու, վասառուների դեմ պայքարելու, վառող և զանազան պայմանների նյութերը պատրաստելու համար:
H	Զըտծին	Չըի մեջ	Մետաղամշակման մեջ և ողանցացության համար:
Si	Ալիցիում	Ավաղի և կաղի մեջ	Ծեմենա պտտարաստելու և ապակու արդյունաբերության համար:
Cl	Քլոր	Կերակրի աղի մեջ	Ռազմական թունավոր զաղեր պատրաստելու, զյուղատնտեսության մեջ վասարալների դեմ պայքարելու, սպիտակացնող զաղեր պատրաստելու համար և այլն:
P	Ֆուֆոր	Հանքերում, վոսկորների մեջ	Պարաբանյութեր և լուցկի պատրաստելու համար:

ՔԻՄԻԱԿԱՆ ՈԵԱԿՑԻԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մենք արդեն ծանոթ ենք բավական թվով քիմիական յերեսությունների: Քիմիական յերեսություններն ուրիշ խոսքով են քիմիական բևսակցիաներ:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի ռեակցիաների յենք հանգիպել թերթ տաքացնում եյինք յերկաթը, պղինձը, ծծմբիպել թերթփողում խառնուրդը, տեղի եյին ունենում բատայլ ռեակցիաները—յերկաթը միանում եր ողի թթվածնի հետ և առաջ եր զալիս յերկաթոքսիոտ. նույնը կատարվում և պղնձի հետ. ծծումբը միանալով յերկաթի հետ՝ տալիս եր ծծմբայերկաթ: Յեթե այդ ռեակցիաները հավասարությամբ արտահայտենք, պետք եր զրենք այսպես.—

Յերկաթ+թթվածին=յերկաթոքսիոտ.

Պղինձ+թթվածին=պղինձոքսիոտ.

Ծծումբ+յերկաթ=ծծմբայերկաթ (յերկաթսոսւլֆիոտ):

Զըտծին+թթվածին=ջուր:

Ինչպես տեսնում եք, այս ռեակցիաների ժամանակ ինչպիսի նյութերը միանալով իրար, քիմիապես առաջ են բերկու նյութերը, բոլորովին նոր հատկություններով: Ռում մի նոր նյութ, բոլորովին նոր միացման ռեակցիա: Այդ տիպի ռեակցիաները կոչվում են միացման ռեակցիա:

Մենք տաքացրինք սնդիկոքսիոտի փոշին, բերառության աղը ելեկտրական հոսանք անցկացրինք ջրի միջով: Այդ ժամանակ սնդիկոքսիոտը տարրալուծվեց իր բաղադրիչ մասերի—մաքուր սնդիկի և թթվածնի, բերառության աղը՝ թթվածնի և կալիում քլորիդի, իսկ ջուրը՝ ջրածնի և թթվածնի: Այս ռեակցիաների հավասարությունները արտահայտում են հայտում ենք այսպես:—

Սնդիկոքսիոտ=սնդիկ+թթվածին:

Բերառության աղ=թթվածին+կալիում քլորիդ:

Ջուր=ջրածնի+թթվածին:

Այս ռեակցիաների ժամանակ նյութը քայքայվում է և ստացվում եր յերկու նոր նյութ, վորոնք դարձյալ տարբեր հատկություններ ունեն:

Այս տիպի ռեակցիաները կոչվում են տարրալուծման կամ վերարտման ռեակցիա:

Զըտծին ստանալու ժամանակ, մենք ցինկն խառնում ենք ծծմբական թթվի և կամ պղաթթվի վրա: Այդ փորձերի ժամանակ թթվից դուրս եր զալիս ջրածնի գազը: Տեսդեմ ունեցող ռեակցիան արտահայտվում է այս հավասարությամբ:

$$\text{Եինկ} + \text{թթու} = \boxed{\text{յինկ և թթվի մնացորդ}} + \boxed{\text{ջրածին}}$$

Այս ոեակցիաների ժամանակ յինկը թթվի միջից դուրս է հանում ջրածինը և ինքն բռնելով նրա տեղը՝ թթվի մը-նացորդի հետ քիմիապես միանալով, կազմում է մի նոր նյութ՝ ծծմբանյութի յինկի աղ, իսկ յերբ յինկը ջրածին դուրս է հանում աղաթթվից և ինքը նրա տեղը բռնելով միանում է թթվի մնացորդի հետ, առաջ է բերում աղաթթվի վի յինկի աղ (աղերին և թթուներին մանրամասն կծանոթանանք հետո):

Այս տիպի ոեակցիաներ կոչվում են արտամղման կամ սեղակալման ոեակցիա:

Այսպիսով մենք ծանոթացանք յերեք տիպի ոեակցիա-ների—1) միացման, 2) վերլուծման և 3) տեղակալման:

Միացման ոեակցիա յե համարվում այն ոեակցիան, վո-րի ժամանակ 2 և ավելի նյութեր քիմիապես միանալով ի-րար հետ, տալիս են մի նոր նյութ:

Վերլուծման ոեակցիա յե համարվում այն ոեակցիան, վորի ժամանակ մի նյութ վերածվում է յերկու կամ ավելի նյութերի (հակառակ միացման ոեակցիային):

Տեղակալման ոեակցիա յե կոչվում այն ոեակցիան, յերբ մի նյութ միացությունից դուրս է մղում այդ միացության ելեմենտներից մեկին և ինքը բռնում է նրա տեղը:

Կա և 4-րդ տիպի ոեակցա—փոխանկման ոեակցիա, վորի հետ կծանոթանանք հետագայում:

Այդ չորս տիպի ոեակցիաներն են, վորոնք տեղի յեն ունենում քիմիական բոլոր յերեվույթների ընթացքում:

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Քանի՞ իմբերի յեն բաժանվում բնության մեջ յեղած տարրերը:

2. Ի՞նչ ընդհանուր հատկություն ունեն մետաղները:

3. Ի՞նչով են տարրերվում մետալոյիդները մետաղներից:

4. Քանի՞ տեսակ քիմիական ոեակցիան գիտեք.

5. Քանաձեվեք—վոր ոեակցիան ե կոչվում միացման, վո՞րը վերլուծման, և վո՞րը տեղեկալման:

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0068121

Ответственный редактор
А. А. Явакян
Технический Редактор
Г. М. Маркарян

2470

У-8

Сд. в. набор 15 V—1932 г.
Сд. в печать 4 VI—1932 г.
Об'ём 1⁸ печ. листа
Тираж 1000 экз

-22972

0

1934/274



На армянском языке

Х И М И Я
задание № 2-3

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԴՐԱԳԱՑՑՈՅՑ

ՊՈՍՈՎ-ԴՈՒ, ՄԱՍԿՈՎԻՉԱՎԻ ՓՈՂ, 53
ԳՐԱԿԱՆՈՒՆ (ԿԱՐՈՅԵՎԱՐ)